ՅՈՒՐԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Վերահրատարակություն

Երաժշտական ստեղծագործությունների
համացանցային հղումներով

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2022

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31գ72
Յ 671

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.

www.zangak.am/9789939681733

Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա.
Յ 671 Երաժշտություն: 7–րդ դաս. դասագիրք/Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2022.— 64 էջ:

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31գ72

ISBN 978–9939–68–173–3

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2022
© Յուզբաշյան Յ., 2022
© Փահլևանյան Ա., 2022
© ԴՏՀՏՇՀ, 2022

Սիրելի՛ յոթերորդ դասարանցիներ

Այս դասընթացի շրջանակներում դուք կծանոթանաք դասական և հանրամատչելի երաժշտությանը: Դասագիրքը ձեզ կօգնի ճիշտ կողմնորոշվելու շրջապատում հնչող բազմատեսակ երաժշտության մեջ և բարձր երաժշտական արվեստը տարբերելու անբովանդակ ու անճաշակ երաժշտությունից:

Դուք կսովորեք երգեր, կլսեք բազմատեսակ երաժշտական ստեղծագործություններ, ձեռք կբերեք երաժշտական տեսական գիտելիքներ, լսողական և կատարողական փորձ: Դրանով կհարստացնեք ձեր իմացությունը, կկարողանաք ճիշտ գնահատել երաժշտությունը:

Հուսով ենք, որ երաժշտությունը կշարունակի մնալ ձեր լավագույն բարեկամը:

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը Երևանում

ԹԵՄԱ 1

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Դասական երաժշտությունը մեզ է հասել դարերի խորքից և, դիմանալով ժամանակի փորձությանը, այսօր էլ ժամանակակից հասարակության մեջ ունի իր պատվավոր տեղը: «Դասական» բառը լատիներեն նշանակում է *օրինակելի*: Այն պարունակում է բարոյական և գեղագիտական այնպիսի արժեքներ, որոնք բերկրանք են պարգևում ունկնդրին, կրթում նրա հոգին, բարի և գեղեցիկ զգացմունքներ արթնացնում նրա սրտում: Որքան մեծ է մարդու երաժշտական պատրաստվածությունը և լսողական փորձը, այնքան նա հեշտ է մտնում դասական երաժշտության կախարդական աշխարհը, հասկանում ունկնդրած երաժշտության նրբերանգները, բովանդակությունը և կառուցվածքը:

Ունկնդրելով դասական երաժշտություն՝ մենք հաղորդակից ենք լինում կոմպոզիտորի ստեղծագործական մտահղացմանը, հետևում նրա երաժշտական մտքի զարգացմանը: Այդ ամենն ընկալելու համար կատարում ենք հոգեկան և մտավոր աշխատանք՝ գործի դնելով ուսումնառության տարիներին ստացած երաժշտական գիտելիքներն ու լսողական փորձը:

Ուրեմն՝ դասական երաժշտությունը պահանջում է լուրջ և ուշադիր վերաբերմունք և երաժշտական տեսական ու լսողական պատրաստվածություն:

Դասական երաժշտության մեջ կան բարդ ժանրեր, ինչպիսիք են օպերան, սիմֆոնիան, բալետը, սոնատը, և պարզ, ավելի հեշտ ընկալվող ժանրեր՝ երգը, ռոմանսը, պարը և այլն: Երաժշտական պարզ ժանրերը, չնայած իրենց մատչելիությանը, նույնպես դասական երաժշտության տեսակներ են:

Սովորեք «Իմ ուսուցիչ» երգը և կատարեք առանձնակի ջերմությամբ:

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉ

Սովորեք

Մեծանում ենք տարեցտարի
Հայացքի տակ քո բարի,
Մեզ տալիս ես կրակ ու հուր
Քո երազանքներով մաքուր:

Կրկներգ — Իմ ուսուցի՛չ, իմ ուսուցի՛չ,
Դու՝ մեր լույսի ակունք պայծառ,
Մեզ տալիս ես հոգուց քո ջինջ
Խոր գիտության ջահը միշտ վառ:

Առաջին մեր զանգով հնչեղ
Մեզ դպրոցն է թև տալիս,
Եվ գալիքն է որպես կանթեղ
Մեր սրտերի երգով գալիս:

Կրկներգ — Իմ ուսուցի՛չ, իմ ուսուցի՛չ...

Մովսես Խորենացի

Խոսք՝ Ն. Միքայելյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Վալսի տեմպով



Քո ե - բա - զանք - նե - բով մա - քուր:

Իմ ու - սու - ցի՛չ, իմ ու - սու - ցի՛չ,

Դու՝ մեր լույ - սի ա - կունք պայ - ծառ,

Դու՝ ա - կունք մեզ պա -

Մեզ պա - լիս ես հո - գուց քո ջինջ

լիս, հո - գուց քո ջինջ

1.

Խոր զի - պու - թյան ջա - - հը միշտ

2.

վառ: — հը միշտ վառ:

Երգիր Փորձե՛ք երգել երկձայն:

Երկձայն երգելու ժամանակ ուշադիր լսե՛ք միմյանց: Աշխատե՛ք ձեր ձայնը միաձուլել մյուս երգողների ձայներին այնպես, որ ստեղծվի բարեհունչ, գեղեցիկ երգեցողություն:

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Առօրյա կյանքի տարբեր իրավիճակներում մարդը տարբեր հոգեվիճակ և տրամադրություն է ունենում. լուրջ զբաղմունքից բացի՝ պահանջ է ունենում զվարճանքի՝ ուրախանալու, կատակելու, պարելու: Նրան օգնության է գալիս հանրամատչելի զվարճական երաժշտությունը, որը չի պահանջում ուշադրության լարում, մտքի լուրջ աշխատանք, այլ իր քաղցրահունչ, թեթև, պարային բնույթով ստեղծում է հանգստի և ուրախ ժամանցի տրամադրություն: Այդպիսին են էստրադային երգերը, պարային թեթև երաժշտությունը, ժամանակակից փոփը, ռոք երաժշտությունը, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել կենցաղային ուրախ արարողությունները՝ խնջույքը, հարսանիքը, պարահանդեսը, ժողովրդական տոնախմբությունը:

Արա Բաղդասարյան. «Աշխակ»

Այսպիսով՝ կարելի է ասել, որ կյանքի տարբեր պահերի մենք կարիք ունենք տարբեր տեսակի երաժշտության: Կարելի է նախապատվությունը տալ այդ տեսակներից որևէ մեկին: Սակայն միշտ պետք է հիշել, որ հանրամատչելի զվարճական երաժշտությունը չի կարող տալ այն հոգևոր հարստությունը, ինչ որ տալիս է դասական երաժշտությունը:

Ունկնդրեք

Սովորեք

Ունկնդրեք ***«Էս առուն ջուր է գալի»*** հայկական ժողովրդական երգը՝ Կոմիտասի մշակմամբ, և կոմպոզիտոր Արտեմի Այվազյանի ***«Հայաստան»*** երգը: Ինչ տրամադրություն են առաջացնում այդ երգերը:

ԷՍ ԱՌՈՒՆ ՋՈՒՐ Է ԳԱԼԻ

Էս առուն ջուր է գալի,
Մի տեսեք՝ ուր է գալի,
Գալիս է, գալիս է սեյր անե:

Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել շաղերով,
Գալիս է, գալիս է սեյր անե:

Տանս տակին կա նռնի,
Ես բարձ բերեմ, դու կռնի,
Գալիս է, գալիս է սեյր անե:

Ես դու մի բաղում պիտենք,
Դու՝ չինարի, ես՝ նռնի,
Գալիս է, գալիս է սեյր անե:

ԷՍ ԱՌՈՒՆ ՋՈՒՐ Է ԳԱԼԻ

Մշակումը՝ Կումիկասի



Մարտիրոս Սարյան. «Հայաստան», 1940

ՀԱՅԱՍՏԱՆ

Սրտիս բոլոր վարդ է բացվել,
Տոնն է այսօր հայության,
Բույրով է քո կյանքը լցվել,
Անուշ օրրան Հայաստան:

Կրկներգ — Միշտ երգի՛ր, հայոց կանա՛չ գարուն,
Ինձ գրկի՛ր քո չքնաղ աշխարհում,
Միշտ դալարի՛ր, երկի՛ր բարի,
Երջանկության իմ չինարի՛:

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ման եմ գալիս սարեսար,
Կանա՛չ սարեր, կապո՛ւյտ ձորեր,
Երկիրն եք իմ լալազար:

Կրկներգ — Միշտ երգի՛ր...

Սիրում եմ քեզ, լո՛ւյս հայրենիք,
Ես իմ կյանքից ավելի,
Գնում ես դու քո երջանիկ
Ճամփաներով արևի:

Կրկներգ — Միշտ երգի՛ր...

ՀԱՅԱՍՏԱՆ

Խոսք՝ Ա. Գրաշու
Երաժշտ.՝ Ա. Այվազյանի



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ եք հասկանում՝ «դասական երաժշտություն» և «հանրամատչելի երաժշտություն» ասելով:

2. Դասական երաժշտության ինչ ժանրեր գիտեք:

3. Հանրամատչելի երաժշտության ինչ տեսակներ գիտեք:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայ հոգևոր երգերը իրենց մեղեդիների գեղեցկությամբ և կառուցվածքի կատարելությամբ վկայում են միջնադարյան Հայաստանում երաժշտական արվեստի բարձր զարգացման մասին:

Հոգևոր երգերն իրենց ձևով ու բովանդակությամբ տարբեր են լինում՝ շարականներ, տաղեր, գանձեր և այլն:

Դրանց հեղինակներն են հայ եկեղեցու գործիչներ և միաժամանակ երաժիշտ–բանաստեղծներ **Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն** ու **Մովսես Խորենացին** (V դար), **Կոմիտաս Աղցեցին** (VII դար), **Ստեփանոս Սյունեցին** (VIII դար), **Գրիգոր Նարեկացին** (X դար), **Ներսես Շնորհալին** (XII դար) և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները, դուրս գալով Հայաստանի սահմաններից, հարստացրել են համաշխարհային երաժշտական մշակույթի գանձարանը:

Էջմիածնի Մայր տաճարը

Ունկնդրեք

Սովորեք

Ունկնդրե՛ք, ապա սովորե՛ք կաթողիկոս, միջնադարյան մեծ բանաստեղծ, երաժիշտ Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» երգը, որը սիրվել ու տարածվել է ժողովրդի մեջ և հիմա էլ կատարվում է ավանդական տոների ու ծեսերի ժամանակ:

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ

Չափավոր *Ներսես Շնորհալի*



Ներսես Շնորհալի

Գրաբար

Առաւօ՛տ լուսոյ,
Արեգա՛կն արդար,
Առ իս լոյս ծագեա:

Բղխո՛ւմն ի Հօրէ,
Բղխեա՛ ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս:

Գա՛նձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտո՛ղ զիս արա:

Դո՛ւռն ողորմութեան
Դաւանողիս բա՛ց,
Դասեցո՛ վերնոցն:

Ունկնդրեք

Սովորեք

Աշխարհաբար

Առավո՛տ լույսի՝
Արդա՛ր արեգակ,
Առ ինձ լո՛ւյս ծագեցրու:

Բխո՛ւմն Հորից,
Բխի՛ր հոգուս մեջ
Բան՝ քեզ հաճելի:

Գա՛նձդ ողորմության,
Գանձը քո ծածուկ
Գտնո՛ղ ինձ արա:

Դուռը ողորմության
Դավանողիս առաջ բա՛ց,
Դասի՛ր վերինների հետ:



«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը՝ Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ

Ինչպես նկատեցիք, բանաստեղծությունը հետաքրքիր կառուցվածք ունի. ստեղծված է **ակրոստիքոսի** սկզբունքով՝ հայոց այբուբենի 36 տառերին համապատասխան: Ամեն տան եռատողերը սկսվում են միևնույն տառով:

Ունկնդրեք

Ունկնդրեք Գրիգոր Նարեկացու ***«Հաւուն–հաւուն»*** տաղը: Իմացեք, որ տաղերը նույնպես երգեր են և ունենում են հոգևոր կամ աշխարհիկ բովանդակություն: Դրանք արտացոլում են իրականության բազմազան կողմերը, արտահայտում մարդկային տարբեր հոգեվիճակներ:

ՊԱՏԱՐԱԳ

Լուսինե Զաքարյան

Պատարագը քրիստոնեական եկեղեցու հիմնական ծիսական արարողությունն է: Պատարագը նաև երաժշտական ստեղծագործություն է, որի երգասացությունները հոգևոր երգեր են, որոնք հորինել են միջնադարյան հայ հեղինակները: Մինչև 19–րդ դարի վերջերը պատարագի երգեցողությունը միաձայն է եղել: Հայ կոմպոզիտորական արվեստում պատարագի երգեցողության բազմաձայնեցման օրինակներից նշանավոր են Մակար Եկմալյանի և Կոմիտասի մշակումները:

Ունկնդրեք

Սովորեք

Ունկնդրեք, ապա սովորեք ***«Տէ՛ր, ողորմեա՛»*** երգը «Հայոց պատարագից»:

«Տէր, ողորմեա՛» երգը կատարեք գեղեցիկ, արտահայտիչ ձայնով: Հետևեք լիգայով իրար կապված հնչյունների սահուն կատարմանը:

ՏԷՐ, ՈՂՈՐՄԵԱ՛

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛,
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:
Արի՛, Աստուա՛ծ, հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց:

Հա՛ս յօգնութիւն ծառայից Քոց,
Անօգնական ազգիս հայոց:
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:
Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա՛:



ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆ
(1856–1905)

Հայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ Մակար Եկմալյանը ծնվել է 1856 թ. Էջմիածնում: Ավարտելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը՝ այնտեղ դասավանդել է երգեցողություն և հայ երաժշտության տեսություն: Իր ուսուցչի՝ Նիկողայոս Թաշչյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է հայկական նոտագրությունը և մասնակցել միջնադարյան հոգևոր երգերի գրառմանն ու հրատարակմանը: Մ. Եկմալյանը երաժշտական կրթություն է ստացել Պետերբուրգի կոնսերվատորիայում՝ ուսանելով ռուս մեծ կոմպոզիտոր Ն. Ռիմսկի–Կորսակովի ստեղծագործական դասարանում:

Վերադառնալով նա դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ստեղծել է արական երգչախումբ, որի մասնակիցներն են եղել հետագայում հայտնի երգիչներ Արմենակ Շահմուրադյանը, Տիգրան Նալբանդյանը, կոմպոզիտորներ Արմեն Տիգրանյանը, Ազատ Մանուկյանը, երաժշտագետ Մ. Աղայանը, որոշ ժամանակ նաև Կոմիտասը:

Եկմալյանը գրել է «Ռոզայի դեգերումները» կանտատը, «Սիմֆոնիկ նախերգանք», «Նոկտյուրն դաշնամուրի համար», երգեր, ռոմաններ, կատարել է հայ ժողովրդական և հայրենասիրական երգերի խմբերգային մշակումներ:

Նրա ստեղծագործությունների մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում «Հայոց պատարագի» մշակումը քառաձայն երգչախմբի համար (a cappella — ա կապելլա), որը լույս է տեսել 1892 թ. Լայպցիգում (Գերմանիա), իսկ չորս տարի անց՝ նաև Վիեննայում (Ավստրիա): Դրա շնորհիվ Եվրոպայի երաժիշտները հնարավորություն ունեցան ծանոթանալու հայ հոգևոր երգարվեստին:

Ունկնդրեք

Սովորեք

Ունկնդրեք, ապա սովորեք հատվածներ «Հայոց պատարագից»՝ «Քրիստոս ի մեջ մեր հայտնեցավ»՝ Մ. Եկմալյանի մշակմամբ, և «Հայր մեր» տերունական աղոթքը՝ Կոմիտասի մշակած «Պատարագից»:

ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՋ ՄԵՐ ՀԱՅՏՆԵՑԱՎ

Մշակումը՝ Մ. Եկմալյանի



ՀԱՅՐ ՄԵՐ

Մշակումը՝ Կումիկասի

Չափավոր

Հայր մեր, որ հեր - կինս, Սուրբ է - ղի - ցի ա - նուն Քո,

Ե - կես - ցե ար - քա - յու - թյուն Քո, Ե - ղի - ցին կամք Քո

Որ-պես հեր - կինս և հեր - կրի: Հաց մեր հա - նա - պա - զոյդ

Տո՛ւր մեզ այ - սօր: Թող մեզ ըզ - պար - կիս մեր,

Որ - պես և մեք թո - ղումք մե - ր ոց պար - կա - պա - նաց:

Եվ մի՛ կա - նիր զմեզ ի փոր - ձու - թյուն,

Այլ փրկր - կյա՛ ի չա - ր ե:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հոգևոր երգերի ինչ տեսակներ գիտեք:
2. Ովքեր են միջնադարյան հոգևոր երգերի հեղինակները:
3. Ո՞վ է «Առաւօտ լուսոյ» երգի հեղինակը:
4. Պատմեք Մակար Եկմալյանի մասին:
5. Ինչ գիտեք «Հայոց պատարագի» մասին:

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏ

Գուսանական և աշուղական երգարվեստները հայ երաժշտական մշակույթի ճյուղերից են: Հաճախ այդ երգարվեստները նույնացվում են, չնայած դրանք մեկը մյուսից էականորեն տարբերվում են ոչ միայն ոճական, այլև ժամանակային առումով:

Գուսանական երգերը ստեղծվել են հին և միջնադարյան Հայաստանում: Այդ երգարվեստի ձևավորումը կապված է **գուսանի** հետ, որը և՛ բանաստեղծ էր, և՛ երգահան, և՛ երգիչ, և՛ նվագածու, և՛ ասմունքող: Արտասանությամբ ներկայացվող իր պատմությունը նա մերթընդմերթ ընդմիջում էր երգով և թատերական խաղով:

Գուսանը մասնակից է եղել ժողովրդի կյանքի բոլոր տոնախմբություններին, խնջույքներին, հարսանիքներին, ինչպես նաև սգո արարողություններին:

Հին գուսանական երգերը գոյատևել են բանավոր ձևով: Դրանք ժամանակի ընթացքում միաձուլվել են ժողովրդական ավանդական հին երգերի հետ, ուստի և չեն պահպանվել այն գուսանների անունները, որոնց երգերն այսօր լսում ենք:

Աշուղական երգարվեստը, որի ծագումը կապվում է 17–18–րդ դարերի հետ, դառնալով գուսանական արվեստի ժառանգորդը, ձեռք է բերել իր դիմագիծը՝ մշակելով երաժշտական և տաղաչափական արվեստի սեփական կանոնները:

Աշուղական արվեստի ծաղկման շրջանում ավանդույթ էին դարձել աշուղական մրցույթները: Մասնակցության ընթացքում երգով պատասխանելով մրցակցի առաջադրած հարցին՝ աշուղը ցուցաբերում էր ստեղծագործական վարպետություն, հանպատրաստից հորինելու շնորհք:

Աշուղական երգի թեման սերն է, գեղեցկության, հայրենիքի, բնության, մարդկային արժեքների գովքը, ինչպես նաև ժլատության, չարության, խաբեության և մարդկային բնավորության բացասական մյուս գծերի պախարակումը:

18–րդ դարի հայ աշուղական երգարվեստի հանճարեղ ներկայացուցիչը Սայաթ–Նովան է: Նա ստեղծագործել է տարբեր լեզուներով՝ հայերեն, վրացերեն և թուրքերեն:

Սայաթ–Նովայի իսկական ժառանգորդը դարձավ մեկ այլ հայ անվանի աշուղ՝ Ջիվանին: Նա ոչ միայն իր երգերն էր հորինում գրական հայերենով, այլև թուրքերենից հայերեն էր թարգմանում ժողովրդի մեջ լայնորեն տարածված և սիրված աշուղական սիրավեպերը:

20–րդ դարից սկսած՝ հայ աշուղները՝ Շերամը, Հավասին, Շահենը, Աշոտը, և նրանց հետնորդները ստեղծագործել են միայն մայրենի լեզվով:

Աշուղներն օգտագործել են տարբեր նվագարաններ՝ քամանչա, քամանի, ջութակ, սազ, թառ, սանթուր, քանոն:

ՀՀ հանրային ռադիոյի «Սայաթ–Նովա» աշուղական երգի վաստակավոր համույթը, գեղարվեստական ղեկավար՝ Թովմաս Պողոսյան

ՋԻՎԱՆԻ
(1846–1909)

Ջիվանին (Սերովբե Լևոնյան) հայ ազգային աշուղական դպրոցի հիմնադիրն է:

Նա ծնվել է Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղում (Վրաստան): Բնությունից օժտված լինելով երաժշտական ընդունակություններով և երգչական ձայնով՝ նա փոքր հասակից մեծ հետաքրքրություն է ունեցել երաժշտության, մասնավորապես՝ աշուղական արվեստի հանդեպ: Ջիվանու սիրած նվագարանները քամանին և ջութակն էին, ընդ որում՝ նա ջութակ էր նվագում քամանիի և քամանչայի նման՝ ծնկին հենած: Պատանի հասակից նա սկսել է երգեր հորինել և երգել սեփական նվագակցությամբ:

Ջիվանու երգերում հավասարապես բարձր արժեք ունեն թե՛ խոսքը, թե՛ մեղեդին: Պատահական չէ, որ Ջիվանուն համարում են նաև բանաստեղծ: Նրա երգերում խիստ ընդգծված են հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության, ազնվության, մարդասիրության թեմաները: Ջիվանին իր երգերում նաև դատապարտում է անարդարությունը, սոցիալական անհավասարությունը, գողությունն ու հիմարությունը:

Ունկնդրե՛ք, ապա սովորե՛ք Ջիվանու ***«Այսօր՝ այսպես, վաղը՝ այնպես»*** և ***«Ես մեկ ծառ եմ ծիրանի»*** երգերը:

Ունկնդրեք

Սովորեք

Ուշադիր կարդացե՛ք երգի բառերը և կնկատեք, որ դրանք ունեն այլաբանական իմաստ: «Ծիրանի ծառ» ասելով՝ Ջիվանին նկատի ունի հայ ազգը:

Հիշենք, որ ծիրանը համարվում է հայկական պտուղ (լատիներեն կոչվում է *պրունուս արմենիակա* (prunus armeniaca), այսինքն՝ *հայկական սալոր:* Այդ է պատճառը, որ ծիրանենին դարձել է Հայաստանի յուրատեսակ խորհրդանիշը:

ԵՍ ՄԵԿ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ

Խոսք և երաժշտություն՝ Ջիվանու



Արևելքում ինձ տնկեց,
Երբ որ տերը ստեղծեց.
Ասավ՝ աճե՛, բազմացի՛ր,
Մի այգի էլ ինձ տվեց:

…Ուղարկեց մի այգեպան՝
Հարավից հսկա իշխան,
Այն հսկայի անունով
Կոչվեցա ծառ Հայկական:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմե՛ք գուսանական երգարվեստի մասին:
2. Ե՞րբ է ծագել աշուղական երգարվեստը:
3. Ի՞նչ հայ գուսանների և աշուղների գիտեք:
4. Պատմե՛ք Ջիվանու մասին:

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Կան դասական երաժշտության նմուշներ, որոնք հանրամատչելի են, այսինքն՝ հանրության համար մատչելի, դյուրընկալելի, հիշվող: Հանրամատչելի լինելը բնավ չի նվազեցնում ստեղծագործության գեղարվեստական արժեքը: Դասական հանրամատչելի գողտրիկ երաժշտության հաճախակի ունկնդրումը ձեզ կնախապատրաստի դասական ավելի բարդ ստեղծագործություններ լսելուն և ընկալելուն:

Համաշխարհային դասական երաժշտության մեծերից մեկի՝ Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի երաժշտությունը սիրելի ու հասկանալի է համայն մարդկությանը: Նրա երաժշտությունն արտահայտում է մարդկային ամենանուրբ զգացմունքներից մինչև ամենահզոր պոռթկումներ: Մոցարտի նրբագեղ և կատարյալ երաժշտության գեղեցկությունն արտացոլում է կյանքի զգացողության խորությունը, մարմնավորում մարդու երջանկության երազանքը:

Մոցարտի ստեղծագործական մեծ ժառանգության մեջ կա նաև կենցաղային հանրամատչելի երաժշտություն, որն առանձնանում է ստեղծագործական հնարամտությամբ և կենսուրախությամբ: Ճիշտ են ասում՝ Մոցարտի երաժշտությունը արևային է: Մոցարտը հանրամատչելի երաժշտություն է գրել նվագախմբի, տարբեր անսամբլների համար: Դրանք սյուիտներ են՝ բաղկացած սերենադներից, նոկտյուրններից, պարերից և այլն: Դասական հանրամատչելի հայտնի և սիրված ստեղծագործություններից է Մոցարտի **«Գիշերային փոքրիկ սերենադը»**՝ գրված լարային նվագախմբի համար:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

Ունկնդրեք «Գիշերային փոքրիկ serենադը» ստեղծագործությունը, որն օգնում է մարդուն մոռանալու հոգնությունն ու տխրությունը, զգալու անսահման բերկրանք:

Ունկնդրեք

Մոցարտի երաժշտությունը ցնցող ուժով արտահայտում է նաև տխուր–քնարական կամ մռայլ–ողբերգական տրամադրություն, սակայն նույնիսկ այդպիսի երաժշտության մեջ, այնուամենայնիվ, գերակշռում են լուսավոր գույները:

Համաշխարհային դասական երաժշտության գլուխգործոցներից մեկը Մոցարտի վերջին ստեղծագործությունն է, որը կոչվում է **«Ռեքվիեմ»**, այսինքն՝ սգո կամ հոգեհանգստի երաժշտություն: Գրված է մեներգիչների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար: Այն բաղկացած է 12 մասից:

Ունկնդրեք Մոցարտի ***«Ռեքվիեմից»*** երկու մաս՝ *«Լաքրիմոզա»,* որ նշանակում է ***«Լացերգ»*** (իտալերեն «լակրիմա»՝ *արցունք* բառից), և *«Դիես իռե»,* որի անվանումը լատիներեն նշանակում է ***«Ցասման օր»:*** «Ռեքվիեմը» ամբողջությամբ կատարել է Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ:

Ունկնդրեք

Ունկնդրելուց հետո պատմեք ձեր տպավորությունները:

Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ

Հայ անվանի խմբավար, մանկավարժ Հովհաննես Չեքիջյանը ծնվել է 1928 թ. Ստամբուլ քաղաքում (Թուրքիա): Վաղ են արթնացել փոքրիկ Հովհաննեսի երաժշտական ընդունակությունները: Հինգ տարեկանից նա սկսել է դաշնամուր նվագել ու երգել: Նրա ծնողները ևս երաժիշտներ էին: Մայրը դաշնամուր էր նվագում: Հայրը՝ Հարությունը, ջութակ էր նվագում ու երգում Կոմիտասի ղեկավարած երգչախմբում: Պատահական չէ, որ Հովհաննես Չեքիջյանի տանը միշտ հնչել են հայ երգն ու երաժշտությունը, մասնավորապես Կոմիտասի երգերը: «Երևի թե դա է եղել պատճառը, որ ես դարձա երաժիշտ, այն էլ՝ խմբավար–դիրիժոր»,— իր հուշերում գրում է Հովհաննես Չեքիջյանը:

Հովհաննես Չեքիջյանը սովորել ու ավարտել է Ստամբուլի կոնսերվատորիան, ապա կատարելագործվել Փարիզում:

1961 թ. Հ. Չեքիջյանը, գալով հայրենիք, ստանձնել է Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի պարտականությունները:

Կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, լսելով Հայաստանի ակադեմիական երգչախմբի համերգները, գրել է. «Շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Նա համաշխարհային ընդգրկման դիրիժոր է, խմբերգային արվեստը հասցրել է համամարդկային հնչողության»:

Իր կատարողական գործունեության համար երգչախումբն արժանացել է բազմաթիվ մրցանակների և կառավարական պարգևների: 2022 թ. դեկտեմբերի 17–ին նշվել է երգչախմբի ստեղծման 75–ամյակը, և Հայաստանի կառավարության որոշմամբ նրան շնորհվել «Ազգային երգչախումբ» տիտղոսը: Այդ վաստակաշատ երգչախումբը 60 տարի անընդմեջ ղեկավարել է Հովհաննես Չեքիջյանը: ՀՀ նախագահի հրամանագրով Հովհաննես Չեքիջյանին շնորհվել է «Հայաստանի Ազգային հերոս» բարձրագույն կոչումը:

Մեծ է Հ. Չեքիջյանի վաստակը նաև որպես մանկավարժ: 1975 թվականից նա դասավանդում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում:

Հ. Չեքիջյանն իր համերգային ծրագրերում մեծ տեղ է հատկացրել հայ երաժշտությանը, մասնավորապես Կոմիտասի խմբերգերին: Նրա համոզմամբ՝ Կոմիտասը հայ ժողովրդի երաժշտության ոգին է, զգացմունքների ու հույզերի արտահայտիչը:

Ունկնդրեք

Ունկնդրեք Կոմիտասի ***«Մնձրևն եկավ»*** և ***«Շախկր–շուխկր»*** խմբերգերը:

Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ

Հ. Չեքիջյանն առանձնակի վերաբերմունք է ունեցել նաև համաշխարհային դասական երաժշտության հանդեպ և իր համերգներում միշտ հնչեցրել է Մոցարտի **«Ռեքվիեմը»** և Բեթհովենի **«9–րդ սիմֆոնիան»:**

Ունկնդրեք

Ունկնդրեք վերոնշյալ ստեղծագործությունները և պատմեք ձեր տպավորությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք, թե նախորդ դասարաններում Մոցարտի որ ստեղծագործություններն եք ունկնդրել և սովորել: Ինչ գիտեք Մոցարտի մասին:
2. Երաժշտության ո՞ր բնագավառներին են պատկանում Մ. Եկմալյանի «Պատարագը» և Մոցարտի «Ռեքվիեմը»:
3. Ձեր ունկնդրած և կատարած ստեղծագործություններից որո՞նք են բարդ, իսկ որո՞նք՝ հանրամատչելի:
4. Պատմեք Հովհաննես Չեքիջյանի մասին:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
(1921–1983)

Հայ ականավոր կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը ծնվել է 1921 թ. Երևանում:

Շատ վաղ են դրսևորվել նրա երաժշտական ընդունակությունները: Ընդամենը 5 տարեկան էր, երբ հոր նվիրած ֆիսհարմոնով (դաշնամուր հիշեցնող փոքր երգեհոն) կարողանում էր վարժ վերարտադրել իր լսած մեղեդիները: Շուտով սկսվեցին դաշնամուրի կանոնավոր պարապմունքները: Այդ տարիներին դրսևորվեց նաև նրա ստեղծագործական տաղանդը: Ինը տարեկանում գրեց «Պիոներական քայլերգ», որը տպագրվեց հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի նախաձեռնությամբ:

Ալեքսանդր Հարությունյան, Ղազարոս Սարյան, Առնո Բաբաջանյան, Ադամ Խուդոյան, Էդվարդ Միրզոյան

Պատանի Առնոն Հայաստանի դաշնակահարներից առաջինն էր, որ ելույթ ունեցավ սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ կատարելով Բեթհովենի «Դաշնամուրի առաջին կոնցերտը»: Շուտով 17–ամյա Առնոն փայլուն ելույթ ունեցավ Մոսկվայում՝ կատարելով սեփական ստեղծագործությունները: Մասնագետները գնահատեցին ոչ միայն նրա ստեղծագործական, այլև դաշնակահարի անժխտելի տաղանդը:

Ռուս մեծ դաշնակահարներ Էմիլ Գիլելսը և Սվյատոսլավ Ռիխտերը համոզված էին, որ եթե Առնոն որոշեր նվիրվել դաշնակահարի գործին, ապա կարող էր դառնալ 20–րդ դարի ամենահռչակավոր կատարողներից մեկը: Սակայն հաղթեց ստեղծագործողը:

Ուսումը շարունակելու նպատակով Բաբաջանյանը որոշեց մնալ Մոսկվայում: Բաբաջանյանի առաջին խոշոր ստեղծագործությունը եղավ «Դաշնամուրի կոնցերտը», որով նա ավարտեց կոնսերվատորիան: Այնուհետև գրեց «Պոլիֆոնիկ սոնատը» դաշնամուրի համար, «Ջութակի կոնցերտը», «Հերոսական բալլադը», «Դաշնամուրային տրիոն», «Թավջութակի կոնցերտը» և այլ հիանալի գործեր:

Առնո Բաբաջանյանն իր ստեղծագործական կյանքի ընթացքում նաև հրաշալի երգեր է գրել: Բաբաջանյանի երգերից յուրաքանչյուրը մի մեղեդային գյուտ է՝ գեղեցիկ, հուզիչ, տպավորիչ: Դրանք կատարվում են ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ երկրներում:

Ունկնդրե՛ք, ապա սովորե՛ք Ա. Բաբաջանյանի ***«Իմ Երևան»*** երգը ***«Առաջին սիրո երգը»*** կինոնկարից:

Ունկնդրեք

Սովորեք

ԻՄ ԵՐԵՎԱՆ

Այստեղ եմ ծնվել ես, այստեղ մեծացել,
Այս ջուրը խմել սառնորակ,
Հազար ճանապարհ ես իմ դեմ դու բացել,
Իմ լավ, հարազա՛տ իմ քաղաք:

Քարդ քարիդ եմ շարել,
Քեզ հետ հասակ եմ առել,
Իմ Երևա՛ն,
Քո ամեն շենքի հետ
Ես իմ կյանքն եմ կապել առհավետ:

Կրկներգ — Քեզ միշտ սիրել եմ, իմ վարդագո՛ւյն ընկեր,
Քեզնով ապրել եմ, քեզ միշտ երգել,
Դու՝ անխավար լույսի տուն, Երևա՛ն,
Ամեն հայի հույսի տուն, Երևա՛ն:

Սիրում եմ գարունդ փարթամ ու լուսեղ,
Աշունդ՝ ոսկե մի երազ,
Նորքիդ բարդիները նազուկ ու վսեմ,
Զանգվիդ կոհակները փիրուզ:

Քեզ հետ կիսել եմ ես միշտ
Թե՛ խնդություն և թե՛ վիշտ,
Իմ Երևա՛ն,
Քո կանաչ սրտի հետ
Ես իմ սիրտն եմ կապել առհավետ:

Կրկներգ — Քեզ միշտ սիրել եմ, իմ վարդագո՛ւյն ընկեր...
Ուշադրությո՛ւն դարձրեք երգի ռիթմին և հնչերանգի ճիշտ կատարմանը:

ԻՄ ԵՐԵՎԱՆ

Խոսք՝ Վ. Հարությունյանի
Երաժշտ.՝ Ա. Բաբաջանյանի





Ունկնդրեք

Ունկնդրեք Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի ***«Հայկական ռապսոդիան»***՝ գրված երկու դաշնամուրի համար: Ռապսոդիայի առաջին կատարողները հենց իրենք՝ հեղինակներն էին: Այդ ստեղծագործությունից մի հատված արդեն ունկնդրել եք չորրորդ դասարանում, նույնիսկ սովորել եք երգել նրանում օգտագործված ***«Լուսնակը ցոլաց, գնաց»*** ժողովրդական երգը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմեք Առնո Բաբաջանյանի մասին:
2. Առնո Բաբաջանյանի ո՞ր ստեղծագործություններն եք լսել:
3. Ովքե՞ր են «Հայկական ռապսոդիայի» հեղինակները:
4. Ո՞ր կինոնկարից է «Իմ Երևան» երգը:

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1930–1998)

Հայ ականավոր կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը ծնվել է 1930 թվականին Երևանում:

Մեծ է Է. Հովհաննիսյանի դերը ազգային դասական բալետային ժանրի զարգացման ասպարեզում: Նրա գրչին են պատկանում «Մարմար», «Երկնագույն նոկտյուրն», «Հավերժական կուռք», «Անտունի» բալետները:

«Սասնա ծռեր» ազգային էպոսով ոգեշնչված՝ նա գրել է «Սասունցի Դավիթ» օպերա–բալետը, որտեղ օգտագործել է էպոսի ժողովրդական պատումների երգային հատվածները:

Չնայած օպերան և բալետը երաժշտական տարբեր ժանրեր են, կոմպոզիտորն այդ երկու ժանրերի միացումով ստեղծել է մեծածավալ ստեղծագործություն, որտեղ միասին հանդես են գալիս մեներ գիչները, պարային խումբը, ասմունքողները, երգչախումբը և սիմֆոնիկ նվագախումբը:

Էդգար Հովհաննիսյանի ստեղծագործական ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում նաև այլ ժանրերի գործեր՝ սիմֆոնիաներ, կոնցերտներ, սյուիտներ: Իսկ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված բազմաթիվ կանտատները, այդ թվում՝ Երևանի 2750–ամյա հոբելյանին նվիրված «Էրեբունի–Արգիշտի» կանտատը և «Գրիգոր Նարեկացի» օրատորիան վկայում են երգչային ձայնի նկատմամբ կոմպոզիտորի մեծ հետաքրքրության մասին:

Է. Հովհաննիսյանը նաև հիանալի երգաստեղծ է: Ո՞վ չգիտի նրա «Էրեբունի–Երևան», «Սարդարապատ», «Արփա–Սևան» երգերը: Նա երգաշար է գրել Վ. Տերյանի խոսքերով, կատարել բազմաթիվ ժողովրդական երգերի խմբերգային մշակումներ:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատվածներ ***«Անտունի»*** բալետից, որը նվիրված է Կոմիտասի ծննդյան 100–ամյակին: Բալետի լիբրետոն գրված է Ե. Չարենցի ***«Ռեքվիեմի»*** և Պ. Սևակի ***«Անլռելի զանգակատուն»*** պոեմի հիման վրա:

Բալետի գլխավոր հերոսը Անտունին է՝ հայրենասեր, մարդասեր, երգասեր մարդու հավաքական կերպարը, ինպիսին էր ինքը՝ Կոմիտասը: Ինչպես Կոմիտասը բախտակից եղավ իր ժողովրդին, Անտունին իր ժողովրդի հետ է աշխատանքի պահին, խրախճանքի ժամանակ, տառապանքի օրերին և պանդխտության մեջ: Երկրորդ գործողության դրամատիկ պահերին նվագախմբին միանում է երգչախումբը՝ որպես գործող անձ, տառապող ժողովրդի ձայն: Բալետի ավարտին վերածնված ժողովուրդը փառաբանում է իր Անտունիին:

Բալետում կոմպոզիտորն օգտագործել է Կոմիտասի գրառած և մշակած մի շարք ժողովրդական երգեր և պարեր՝ «Անտունի», «Կռունկ», «Սիփանա քաջեր», «Շուշիկի պարը» և այլն: Դրանք ենթարկելով սիմֆոնիկ զարգացման՝ Է. Հովհաննիսյանը կերտել է արտահայտիչ կերպարներ, ստեղծել գեղեցիկ, ազգային երանգով հարուստ, գունեղ երաժշտություն:

Տեսարան «Անտունի» բալետից

Ունկնդրեք Կոմիտասի ***«Անտունի» և «Սիփանա քաջեր»*** ստեղծագործությունները, ապա նաև ***«Անտունի»*** բալետում հնչող նույն մեղեդիները: Պատմեք ձեր տպավորությունները:

Ունկնդրեք

Սովորեք «Էրեբունի–Երևան» երգը, որի բառերը գրել է հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակը, իսկ երաժշտությունը՝ անվանի կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը: Երգը նվիրվել է Երևան քաղաքի 2750–ամյա հոբելյանին:

Վիպական շնչով ստեղծված այս երգը համայն հայոց սիրելի Երևանի մասին է, որը, հնագույն ժամանակներից հիմնված լինելով հայր Մասիսի և մայր Արաքսի հարևանությամբ, դարերի միջով հասել է մեզ, դարձել մեր պաշտելի օրրանը, միշտ նորոգվող մեր քաղաքամայրը:

Իմաստուն խոսքի և հուզական մեղեդու միաձուլումը երգին հաղորդել է այնպիսի գեղեցկություն և արտահայտչականություն, որ երգն անմիջապես սիրվել ու տարածվել է ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում: **«Էրեբունի–Երևան»** երգը Երևան քաղաքի օրհներգն է, նրա երաժշտական խորհրդանիշը:

Էրեբունի–Երևան փոնակատարությունը, 2012 թ.

Ունկնդրեք

Սովորեք

Երգը նախ ունկնդրեք երկսեռ քառաձայն երգչախմբի և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի կատարմամբ, ապա սովորեք և երգեք դպրոցում, տանը և հանդիսությունների ժամանակ:

ԷՐԵԲՈՒՆԻ–ԵՐԵՎԱՆ

Խոսք՝ Պ. Սևակի
Երաժշտ.՝ Է. Հովհաննիսյանի



ԷՐԵԲՈՒՆԻ–ԵՐԵՎԱՆ

Երևան դարձած իմ Էրեբունի՛,
Դու՝ մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

Կրկներգ — Երևան դարձած իմ Էրեբունի՛,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևա՛ն:

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ:
Մեր կանչն առանց քեզ իզուր կկորչի,
Առանց քեզ մեր տաք տենչն էլ կսառչի:

Կրկներգ — Երևան դարձած իմ Էրեբունի՛…

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերիդ պես,
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պես:

Կրկներգ — Երևան դարձած իմ Էրեբունի՛…

ԵՐԳՉԱԿԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Էրեբունի–Երևան» երգը լսեցիք երկսեռ քառաձայն երգչախմբի կատարմամբ: Իսկ գիտե՞ք, թե իգական և արական երգչային ինչ ձայներ կան երկսեռ երգչախմբում:

Երգչական ձայները լինում են *բարձր, միջին* և *ցածր:*

Իգական բարձր ձայնը կոչվում է **սոպրանո**, միջինը՝ **մեցցո սոպրանո**, իսկ ցածր ձայնը՝ **ալտ:**

Արական բարձր ձայնը կոչվում է **տենոր**, միջինը՝ **բարիտոն**, իսկ ցածր ձայնը՝ **բաս**:

ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԳԻՉՆԵՐ

Հայկանուշ Դանիելյան
(1893–1958)
Սոպրանո

Գոհար Գասպարյան
(1924–2007)
Բարձր սոպրանո
(կոլորատուրային)

Տաթևիկ
Սազանդարյան
(1916–1999)
Մեzzո սոպրանո (ալտ)

Ավագ Պետրոսյան
(1912–2000)
Տենոր



Պավել Լիսիցյան
(1911–2004)
Բարիտոն

Նար Հովհաննիսյան
(1913–1995)
Բաս

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ երգչային ձայներ գիտեք:
2. Պատմե՛ք Է. Հովհաննիսյանի մասին:
3. Ինչպիսի՞ն է «Էրեբունի–Երևան» երգը:
4. Է. Հովհաննիսյանի ո՞ր ստեղծագործությունն է նվիրված Կոմիտասին:
5. Ինչպե՞ս են կոչվում երգչախմբի իգական և արական երգչային ձայները:

ԹԵՄԱ 2

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ

Հաճախ դասական և հանրամատչելի զվարճական երաժշտությունը հնարավոր չի լինում խստորեն սահմանազատել, դրանց միջև նկատվում են փոխներթափանցման երևույթներ: Օրինակ՝ դասական երաժշտության այնպիսի բարդ ժանրում, ինչպիսին օպերան է, բովանդակության թելադրանքով ժողովրդական կյանքի տեսարան ստեղծելու կամ հերոսի հոգեվիճակը բնութագրելու նպատակով հաճախ օգտագործվում է երգը, որը պարզ կառուցվածքով տարբերվում է արիայից: Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի «Ամպի տակից», «Համբարձում յայլա», «Ասում են ուռին» երգերն այնքան սիրելի են դարձել ժողովրդին, որ հաստատուն տեղ են գրավել կենցաղում և հաճախ կատարվում են խնջույքների ու տոնախմբությունների ժամանակ:

Բեթհովենն իր վերջին՝ «9–րդ սիմֆոնիայում» օգտագործել է երգը, որովհետև մտահղացել է, որ եղբայրության և երջանկության ձգտելու իր գաղափարները լավագույն ձևով կարելի է արտահայտել միայն խոսքի և երաժշտության միասնության միջոցով: «Միլիոնավո՛ր մարդիկ, միացե՛ք» իր երաժշտությամբ կոչ է անում կոմպոզիտորը: Գերմանացի մեծ բանաստեղծ Շիլլերի «Ուրախության ձոներգի» տեքստով գրված այդ շքեղ խմբերգը կազմում է «9–րդ սիմֆոնիայի» չորրորդ մասը՝ ավարտը (ֆինալը):

Ունկնդրե՛ք Բեթհովենի ***«9–րդ սիմֆոնիայի»*** ավարտը Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ՝ Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ: Պատմե՛ք ձեր տպավորությունները:

Ունկնդրե՛ք

Սովորեք «Ուրախության ձոներգը» Բեթհովենի 9–րդ սիմֆոնիայից:

ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՁՈՆԵՐԳ

Հայերեն տեքստը՝ Ա. Բաղդասարյանի
Երաժշտ.՝ Լ. Բեթհովենի

Պաշտում ենք քեզ, ուրախությո՛ւն,
Փառավորյալ Տե՛ր Աստված,
Օրհնի՛ր փառքով, Քո մեծ կամքով,
Փարատի՛ր հոգս ու թախիծ:

Օրհնյա՛լ ես դու, երջանկությո՛ւն՝
Փրկչի շնչով տոգորված,
Փառաբանում ենք քեզ անհուն,
Մեր ողջ հոգով սրտաբաց:

Շողա՛, ցնծա՛, ուրախությո՛ւն,
Սիրո կրակն անհատնում
Պահի՛ր մեր մեջ վառ ու արթուն՝
Որպես փարոս խավարում:

Ուրախ երգով գնա՛նք առաջ
Հորձանուտում պայքարի,
Ուղեկցի՛ր մեզ որպես դրոշ՝
Հաղթանակի ու փառքի:



Ունկնդրե՛ք Յոհան Շտրաուսի ***«Արտիստի կյանքը»*** վալսը և ***«Տրիկ–տրակ»*** պոլկան: Երաժշտության ո՞ր տեսակին են պատկանում այս ստեղծագործությունները:

Ունկնդրե՛ք

ՅՈՀԱՆ ՇՏՐԱՈՒՍ
(1825–1899)

Յոհան Շտրաուսն ավստրիացի կոմպոզիտոր, ջութակահար ու դիրիժոր է: Ծնվել է Վիեննայում՝ երաժիշտների ընտանիքում: Նրա հայրը՝ ավագ Շտրաուսը, համարվում է վիեննական վալսի ստեղծողը: Հոր մահից հետո որդին՝ Յոհան Շտրաուսը, շարունակում է ստեղծագործել և դառնում է վիեննական դասական վալսի հիմնադիրը, որի համար նրան անվանել են «Վալսի արքա»: Յոհան Շտրաուսը ստեղծագործել է երաժշտական տարբեր ժանրերում, սակայն նրա մի շարք վալսեր՝ «Հիասքանչ երկնագույն Դանուբի վրա», «Վիեննական անտառի հեքիաթները», «Գարնանային ձայներ», «Արտիստի կյանքը» և այլն, համաշխարհային ճանաչման են արժանացել: Յոհան Շտրաուսը գրել է նաև օպերետներ: Օպերետը փոքրիկ օպերա է, որտեղ ոչ միայն երգում են ու պարում, այլև խոսում: Յոհան Շտրաուսի նշանավոր օպերետներից են՝ «Չղջիկ», «Գնչուների բարոն», «Գիշերը Վենետիկում» և այլն:

Ունկնդրե՛ք Ունկնդրե՛ք հատված ***«Չղջիկ»*** օպերետից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է Բեթհովենի նորարարությունը «9–րդ սիմֆոնիայում»: Ի՞նչ ժանր է ներմուծել նա սիմֆոնիկ երաժշտության մեջ:
2. Գերմանացի ո՞ր բանաստեղծի խոսքերով է գրված «9–րդ սիմֆոնիայի» վերջաբանը:
3. Պատմե՛ք Յոհան Շտրաուսի մասին:

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դասական երաժշտությունն իր ձեռքբերումներով հիմք դարձավ երաժշտության բոլոր ուղղություններ-ի հետագա զարգացման համար: Այսօր էլ կոմպոզիտորական արվեստն օգտվում է դասական երաժշտության մշակած ձևերից, արտահայտչամիջոցներից, նվագարանային կազմից:

Մեր հոգևոր կյանքն անհնարին է պատկերացնել առանց Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Չայկովսկու, Գրիգի, Բիզեի, Շոպենի, Լիստի, Ռախմանինովի և շատ այլ կոմպոզիտորների երաժշտության: Մեր մշակույթի հարստությունն է կազմում նաև հայ դասականներ Կոմիտասի, Ա. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Խաչատրյանի, Ա. Բաբաջանյանի, Ա. Հարությունյա-նի, Է. Միրզոյանի, Ղ. Սարյանի և նրանց տաղանդավոր հետնորդների արվեստը:

Այսպիսով՝ դասական լուրջ երաժշտությունն այ-սօր էլ ապրում է, ինչում աշխարհի լավագույն համեր-գասրահներում՝ հոգեկան մեծ բավականություն տալով մարդկանց, լինելով այժմեական ու պահանջված:

Ունկնդրե՛ք Յ. Ս. Բախի ***«Ռե մինոր տոկատը և ֆուգան»***՝ գրված երգեհոնի համար, որն այսօր էլ արդիական է ինչում:

Ունկնդրե՛ք

Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ բոլոր ձայ-ներն ինքնուրույն նշանակություն ունեցող մեղեդիներ են և միաձուլվելով ստեղծում են հարուստ ու գեղեցիկ ինչողություն:

Ֆուգան պոլիֆոնիկ (բազմաձայն) երաժշտության կատարյալ և բարդ տե-սակներից է: *Ֆուգա* իտալերեն նշանակում է *վազք*: Եթե ուշադիր ունկնդրեք, կնկատեք, թե ինչպես է ֆուգայի գլխավոր մեղեդին՝ թեման, մեկ ձայնից տեղափոխվում մյուսը՝ ստեղծելով գեղեցիկ մեղեդիներ, որոնք միահյուսվելով կարծես մրցում են իրար հետ: Բախի «Ռե–մինոր տոկատը և ֆուգան» աչքի է ընկնում հարուստ ինչողությամբ, լայնաշունչ մեղեդիների միաձուլմամբ, միմյանց լրացնող ձայների գեղեցիկ ելևէջներով:

ԵՐԳԵՀՈՆ

Երգեհոնն ամենահին ստեղնային–փողային նվագարաններից է: Այն իր հնչողական հնարավորություններով ամենահարուստ նվագարանն է, որը չափերով բավականին մեծ է և ունի բարդ կառուցվածք:

Երևանում երգեհոն է տեղադրված Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության դահլիճում:

Երգեհոնն ունի մեծ քանակությամբ տարբեր մեծության փողեր, որոնք արձակում են տարբեր բարձրության և տեմբրի հնչյուններ: Երգեհոնը նվագում են ստեղների միջոցով: Երբ սեղմվում են ստեղները, օդն անցնում է նվագարանի փողերի մեջ և հնչեցնում դրանք: Հակառակ դաշնամուրի՝ երգեհոնն ունի մի քանի ստեղնաշար: Բացի ձեռքով նվագվող ստեղնաշարերից՝ ունի նաև ոտքերով նվագելու ստեղնաշար:

Երգեհոնից կարելի է ստանալ սիմֆոնիկ նվագախմբի գրեթե բոլոր նվագարանների ձայները:

ՅՈՀԱՆ ՍԵԲԱՍՏԻԱՆ ԲԱԽ
(1685–1750)

Գերմանացի հանճարեղ կոմպոզիտոր և երգեհոնահար Յոհան Սեբաստիան Բախը ծնվել է 1685 թ. Այզենախ քաղաքում:

Նրա նախնիները և հետնորդները նույնպես եղել են երաժիշտներ՝ կոմպոզիտորներ, խմբավարներ, երգեհոնահարներ: Բախի տոհմում եղել են շուրջ 80 պրոֆեսիոնալ երաժիշտներ, որոնք մեծ դեր են խաղացել Գերմանիայի երաժշտության պատմության մեջ:

Մանուկ Յոհան Սեբաստիանին հայրն է սովորեցրել ջութակ նվագել և ծանոթացրել է երաժշտության տարրական տեսությանը:

Դպրոցում սովորելու տարիներին Բախը մեծ հետաքրքրությամբ և սիրով է մասնակցել եկեղեցական երգչախմբի պարապմունքներին: Ծնողների մահվան պատճառով տասը տարեկանից նա ավագ եղբոր՝ Յոհան Քրիստոֆի խնամքի տակ է եղել: Ավագ եղբայրը երգեհոնահար էր: Նա էլ սովորեցրել է կրտսեր եղբորը կլավեսին և երգեհոն նվագել:

Օժտված լինելով երաժշտական բացառիկ ընդունակություններով՝ Բախը նաև չափազանց աշխատասեր էր:

Բախը բազմանդամ ընտանիքի հայր էր: Առաջին կնոջից նա ուներ 7 երեխա: Նրանցից երկուսը հետագայում դարձան հայտնի կոմպոզիտորներ: Կնոջ՝ Մարիա Բարբարայի մահից հետո Բախը երկրորդ անգամ ամուսնանում է Աննա Մագդալենայի հետ և ունենում ևս 13 երեխա: Բոլոր երեխաները մեծանում էին երաժշտական մթնոլորտում և սովորում կլավեսին նվագել (կլավեսինը դաշնամուրի նախահայրն է): Աննա Մագդալենան արտագրում էր ամուսնու ստեղծած փոքրիկ պիեսները, որպեսզի երեխաները նվագեն: Այդպես կազմվեց «Աննա Մագդալենա Բախի տետր» ժողովածուն:

Բախն աշխատել է գերմանական տարբեր քաղաքների եկեղեցիներում՝ որպես երգեհոնահար, կլավեսինահար, ջութակահար, միաժամանակ ստեղծագործել է բազմաթիվ և բազմատեսակ երաժշտական ստեղծագործություններ: Գրել է օրատորիաներ, կանտատներ, մեսսաներ, երաժշտություն՝ դաշնամուրի, ջութակի, երգեհոնի և այլ նվագարանների համար՝ հազարից ավելի պոլիֆոնիկ ստեղծագործություններ:

Չնայած Յ. Ս. Բախի մահից անցել է երկու հարյուր վաթսուն տարուց ավելի, սակայն այսօր էլ նրա արվեստը չի կորցնում իր արդիականությունը և հմայքը: Ճշմարիտ են ասում. «Չնայած *բախ* գերմաներեն նշանակում է *առվակ,* սակայն նա իր արվեստով մի ամբողջ օվկիանոս էր»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով դասական երաժշտությունն այսօր արդիական է, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

2. Ինչպիսի՞ նվագարան է երգեհոնը: Լսե՛լ եք երգեհոնի նվագը համերգասրահում:

3. Պատմե՛ք Յ. Ս. Բախի մասին:

4. Պատմե՛ք Յ. Ս. Բախի «Ռե մինոր տոկատ և ֆուգա» ստեղծագործությունից ստացած ձեր տպավորությունները:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի կենցաղում կիրառվող երաժշտության իր տեսակները: Ավելին՝ յուրաքանչյուր դարաշրջան իր նորամուծություններն է կատարում կենցաղային երաժշտության տեսակների մեջ: Այսօր քաղաքային միջավայրում զանգվածային երաժշտական մշակույթը շատ խայտաբղետ է: Մեծ տարածում ունեն փոփ, ռոք, ռեպ երաժշտական ուղղությունները: Շարունակում են զարգանալ աֆրիկյան ու ամերիկյան ջազի համաշխարհային, այդ թվում՝ հայկական, ազգային ձևերը:

Ջազը երաժշտական արվեստի ուղղություններից մեկն է, որը սկսեց ձևավորվել 19–րդ դարի վերջերին և 20–րդ դարում հասավ կատարյալ զարգացման: Ծագելով աֆրիկյան ու եվրոպական մշակույթների միաձուլումից՝ ջազը տարածվեց ամբողջ աշխարհում:

Ջազի հայրենիքը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Ջազի երաժշտությունը հիմնվել է մի կողմից՝ ամերիկյան սևամորթների սպիրիչուելների, այսինքն՝ հոգևոր երգերի, իսկ մյուս կողմից՝ **բլյուզ** կոչվող ժողովրդական քնարական երգերի և ծափերով ուղեկցվող պարերի վրա: Օգտագործվել են նաև եվրոպական դասական երաժշտության ձեռքբերումները:

Սևամորթների երգերն ունեն յուրօրինակ մեղեդային ոճ և սինկոպաներով հարուստ, բարդ ռիթմիկա: Դրանցով է պայմանավորված ջազային երաժշտության հարուստ ռիթմահնչերանգային անկրկնելիությունը, որը պահանջում է կատարողական յուրահատուկ ոճ և հմտություն:

Ջազային երաժշտության հիմքում ընկած է իմպրովիզացիայի և վարիացիայի միջոցով զարգանալու սկզբունքը: **Իմպրովիզացիա** է կոչվում

հանպատրաստից հորինումը, հանկարծաստեղծումը հենց կատարման ընթացքում: Ընտրված մեղեդին ջազային երաժիշտն իր երևակայությամբ զարգացնում և հարստացնում է՝ ենթարկելով բազմաթիվ փոփոխությունների, այսինքն՝ **վարիացիաների, ձևափոխությունների:** Ջազային երաժշտության լավագույն կատարողները նաև հիանալի իմպրովիզատորներ են:

Ջազային կատարողական արվեստում ընդունված կարգ կա. նվագախմբի ընդհանուր մուտքից հետո յուրաքանչյուր երաժիշտ իր մենանվագով իմպրովիզացիայի է ենթարկում ընտրված մեղեդին: Այդ իմպրովիզացիաների շարանում իր տեղն ունի նաև հարվածային նվագարաններ նվագող երաժիշտը, որը ցուցադրում է իր ռիթմական զգացողության հարստությունը և կատարողական հմտությունը: Վերջում բոլորը միանում են մեկ ընդհանուր հնչողության մեջ:

Իմպրովիզացիայի արվեստին տիրապետում են նաև դասական երաժշտություն ստեղծող կոմպոզիտորները: Հիանալի իմպրովիզատորներ էին Բախը, Մոցարտը, Բեթհովենը:

Հայ կոմպոզիտորներից իմպրովիզացիայի մեծ վարպետ էր Արամ Խաչատրյանը:

Երաժշտության պատմության մեջ հայտնի է, թե ինչպես Յոհան Սեբաստիան Բախը հյուր է գնում իր ավագ որդուն՝ կոմպոզիտոր Կարլ Ֆիլիպ Էմանուել Բախին, որը ծառայում էր Ֆրիդրիխ Երկրորդ արքայի պալատում՝ որպես պալատական երաժիշտ: Բախի պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ արքան մի մեղեդի է առաջարկում իմպրովիզացիայի համար: Բախն այնպիսի գեղեցիկ և հարուստ իմպրովիզացիա է նվագում, որ նոտագրվելուց և հրատարակվելուց հետո այն ճանաչվում է 18–րդ դարի պոլիֆոնիկ արվեստի գլուխգործոցներից մեկը:

Ջազային նվագախումբը սկզբում հիմնականում բաղկացած էր փողային նվագարաններից՝ շեփորներից, տրոմբոններից, սաքսոֆոններից,

կլառնետներից, հարվածային նվագարաններից: Այդպիսի կազմ ունեցող մեծ նվագախումբը կոչվում է **բիգ–բենդ:** Հետագայում նվագախմբին ավելացան կոնտրաբասը, կիթառը կամ բանջոն և դաշնամուրը:

Տարիների ընթացքում ջազը ոչ միայն դուրս եկավ իր ծննդավայրի՝ Նոր Օռլեան քաղաքի սահմաններից, այլև տարածվեց Ամերիկայով մեկ: Այսօր ջազային երաժշտությունը մեծ ճանաչում է ձեռք բերել ամբողջ աշխարհում:

Ջազային անկրկնելի երաժիշտներից են փողհար և երգիչ **Լուի Արմսթրոնգը,** կոմպոզիտոր և դաշնակահար **Դյուկ Էլինգթոնը**, կլառնետահար **Բենի Գուդմենը**, դաշնակահար **Քաունթ Բեյսին,** ալտսաքսոֆոնահար **Չարլի Փարքերը**, տրոմբոնահար և կոմպոզիտոր **Գլեն Միլլերը**: Բոլորն էլ եղել են բիգ–բենդի ղեկավար և փայլուն տիրապետել են իմպրովիզացիայի արվեստին: Կարելի է հիշել նաև հայազգի ամերիկացի թմբկահար **Պոլ Մոտյանի** անունը, որը մեծ համբավ է վայելում որպես տաղանդավոր ջազային երաժիշտ:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ջորջ Գերշվինի ***«Լավ գրամադրություն»*** երգը «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի կատարմամբ՝ Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ, ապա այդ նույն երգը լսեք «Բիգ–բենդ» ջազային նվագախմբի կատարմամբ՝ Գլեն Միլլերի ղեկավարությամբ:

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը

Ջազային երաժշտության զարգացման ընթացքում մեծ նվագախմբերի՝ բիգ–բենդերի կողքին սկսեցին առաջանալ փոքրիկ ջազային համույթներ՝ տարբեր նվագարանային կազմերով: Առաջացան նաև այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են վոկալ ջազը և սիմֆո–ջազը:

Լուի Արմսթրոնգ

Ջազային երաժշտությունը հետզհետե ստացավ տարբեր ճյուղավորումներ: Արդեն դասական դարձած ջազային երաժշտությունը, որի բնորոշ գիծը **սվինգն** է, կոչվում է **մեյնսթրիմ** (հիմնական ուղղություն):

Այնուհետև առաջացան **բի–բոփը**, **էթնո–ֆոլկ–ջազը**, **պրոգրեսիվ ջազը**, որի երաժշտության մեջ ներխուժեցին եվրոպական սիմֆոնիզմի տարրեր և այլ ուղղություններ:

Ունկնդրեք ***«Արի՛ գնանք, իմ ժողովո՛ւրդ»***–ը (Let's my people go)՝ Լուի Արմսթրոնգի կատարմամբ, և լսեք ***«Չապրագունա ջու, ջու»*** նվակախումբի կատարմամբ:

Բի–բոփ ոճի ջազային երաժշտությունն աչքի է ընկնում արագ տեմպով, ռիթմական բազմազանությամբ, հարմոնիկ լեզվի հարստությամբ, իսկ երգեցողության մեջ՝ անիմաստ վանկերի օգտագործմամբ՝ իմպրովիզացիայով, որը նմանեցվում է նվագարանային կատարմանը:

Ջազի **բի–բոփ** ուղղության վարպետներից է հայ երգչուհի Տաթևիկ Հովհաննիսյանը:

Ունկնդրեք կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանի «***Տեմպ, ռիթմ, մեղեդի»*** ստեղծագործությունը՝ Տաթևիկ Հովհաննիսյանի կատարմամբ:

ՋՈՐՋ ԳԵՐՇՎԻՆ
(1898–1937)

Դասական երաժշտության ձեռքբերումները և արտահայտչական հնարավորություններն օգտագործվում են հանրամատչելի և այլ ժանրերի երաժշտության մեջ: Ջազի և դասական երաժշտության մերձեցումը ինքնատիպ կերպով իրականացրել է ամերիկացի կոմպոզիտոր Ջորջ Գերշվինը:

Նման դեպքերում կարող ենք խոսել երաժշտական տարբեր ուղղությունների փոխներթափանցման մասին:

Ջորջ Գերշվինը ծնվել է 1898 թ. ԱՄՆ–ի Բրուկլին քաղաքում՝ Ռուսաստանից գաղթածների ընտանիքում: 12 տարեկանից նա սկսել է դաշնամուր նվագել: Գերշվինը 21 տարեկան էր, երբ գրեց «Ռապսոդիա բլյուզի ոճով» ստեղծագործությունը: Դա հռչակեց նրան որպես առաջին կոմպոզիտոր, ով կարողացավ ջազի, բլյուզի և զվարճական երաժշտության տարրերի հիման վրա ստեղծել եվրոպական լուրջ ժանրի վիրտուոզ կոնցերտային ստեղծագործություն:

Ունկնդրե՛ք

Ունկնդրե՛ք Ջորջ Գերշվինի ***«Ռապսոդիա բլյուզի ոճով»*** ստեղծագործությունը՝ դաշնամուրի, ջազ–բենդի և սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, և պատմե՛ք ձեր տպավորությունները:

Գերշվինը տարբեր ժանրի բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Նա ստեղծել է շուրջ 20 մյուզիքլ և օպերետ, դաշնամուրի կոնցերտ, «Ամերիկացին Փարիզում» սիմֆոնիկ պոեմը, «Կուբայական նախերգանք» սիմֆոնիկ նվագախմբի համար, բազմաթիվ այլ գործիքային ստեղծագործություններ, շուրջ 40 երգ:

Սակայն նրա կարճ կյանքի ամենագլխավոր ստեղծագործությունը եղավ «Պորգի և Բես» օպերան, որի երաժշտությունը հիմնված է աֆրիկյան և ամերիկյան հնչերանգների ու ռիթմերի վրա: Օպերայի բովանդակության հիմքում հաշմանդամ երիտասարդ Պորգիի և մի աղջկա՝ Բեսի սիրո պատմությունն է: Օպերայի գլխավոր հերոսների արիաներն ու երգերը այնքան սիրվեցին, որ անմիջապես տարածվեցին և հաճախ հնչում են համերգային բեմերում:

Ունկնդրե՛ք

Սովորե՛ք

Ունկնդրե՛ք Կլարայի օրորոցայինը ***«Պորգի և Բես»*** օպերայի առաջին գործողությունից:
Սովորե՛ք «Երբեմն ինձ որբ երեխա եմ զգում» սպիրիչուելը: Երգե՛ք նոտաներով, ուշադրությո՛ւն դարձրեք սինկոպաների ճիշտ կատարմանը, ապա երգե՛ք բառերով:

SOMETIMES I FEEL LIKE A MOTHERLESS CHILD



Sometimes I feel like a motherless child,
Sometimes I feel like a motherless child,
Sometimes I feel like a motherless child,
A long way from home.

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմե՛ք ջազային երաժշտության մասին:
2. Ինչ է նշանակում իմպրովիզացիա և վարիացիա:
3. Ինչ նվագարաններից է բաղկացած բիգ–բենդ նվագախումբը:
4. Ջազային երաժշտության ինչ տեսակներ գիտեք:
5. Պատմե՛ք Ջորջ Գերշվինի մասին:

ՋԱԶԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ջազային երաժշտության մուտքը Հայաստան կապված է 20–րդ դարի 30–ական թվականների հետ: Առաջին ջազային նվագախումբը 1936 թ. ստեղծել է հիանալի երաժիշտ, շեփորահար Ցոլակ Վարդազարյանը՝ կոմպոզիտոր Մարտին Վարդազարյանի հայրը: Այդ նվագախումբը ելույթ էր ունենում «Մոսկվա» կինոթատրոնում: Սակայն Հայաստանում ջազի ծագման տարեթիվը համարվում է 1938 թվականը, երբ ստեղծվեց հայկական պետական ջազ–նվագախումբը, որն ավելի ուշ կոչվեց էստրադային նվագախումբ: Նվագախմբի ղեկավարը դարձավ կոմպոզիտոր Արտեմի Այվազյանը, իսկ Ցոլակ Վարդազարյանը դիրիժորն էր և մենակատար շեփորահարը: Նվագախմբի կատարած երաժշտությունը դարձավ ժողովրդի կողմից սիրված ոճերից մեկը: Դրա վառ ապացույցն այն է, որ համերգներին հնչած երգերն անմիջապես տարածվում էին ժողովրդի մեջ և հնչում ամենուրեք:

Արտեմի Այվազյանն էստրադային նվագախումբը գլխավորեց մինչև 1956 թվականը: Նրանից հետո նվագախմբի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորը դարձավ երիտասարդ կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանը: Հետզհետե ընդլայնվեց նվագախմբի երգացանկը: Նրա համար երգեր և նվագարանային ստեղծագործություններ էին գրում Հայաստանի առաջատար կոմպոզիտորները: Նվագախմբի կատարմամբ շարունակում էին հնչել նրա ղեկավարների՝ Ա. Այվազյանի և Կ. Օրբելյանի ստեղծագործությունները:

Հայ կոմպոզիտորները ստեղծեցին ջազային երաժշտության ազգային ոճ՝ ստեղծագործաբար միացնելով հայկական ժողովրդական երաժշտության հնչերանգները ջազային ռիթմերի, տեմբրերի և կատարողական միջոցների հետ:

Այդ ասպարեզում մեծ է Մ. Վարդազարյանի, Մ. Մավիսակալյանի, Ե. Երզնկյանի, Ս. Շաքարյանի, Ա. Սաթյանի, Դ. Ազարյանի և այլոց ներդրումը:

Ջազային երաժշտությունն այսօր նոր վերելք է ապրում Հայաստանում: Ասպարեզ է եկել ջազային երաժշտություն ստեղծողների և կատարողների նոր, տաղանդավոր սերունդ: Երևանում կայանում են ամենամյա ջազային փառատոներ, իրենց արվեստն են ցուցադրում թե՛ տեղի, թե՛ այլ երկրների երաժիշտները:

Ունկնդրեք Արտեմի Այվազյանի ջազային ստեղծագործություններից ***«Հայկական ռապսոդիան»***, որով նա հաճախ սկսում էր իր ջազ–նվագախմբի համերգները:

Ունկնդրեք

ԱՐՏԵՄԻ ԱՅՎԱԶՅԱՆ
(1902–1975)

Կոմպոզիտոր, թավջութակահար և դիրիժոր Արտեմի (Հարություն) Այվազյանը ծնվել է 1902 թ. Բաքվում: Ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան՝ որպես թավջութակահար: Ստեղծագործության դասեր է ստացել Ա. Սպենդիարյանից:

Տեղափոխվելով Հայաստան՝ Արտեմի Այվազյանը նվիրվել է ստեղծագործական աշխատանքին և միաժամանակ զբաղվել մանկավարժությամբ:

Նրա ջանքերով ստեղծվել է Հայաստանի պետական ջազ–նվագախումբը, որն Ա. Այվազյանը ղեկավարել է 18 տարի: Նա ղեկավարել է նաև Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնը:

Ա. Այվազյանը Հայաստանում ստեղծված առաջին օպերետների հեղինակն է: Նա գրել է 2 օպերա, 3 օպերետ, սիմֆոնիկ ստեղծագործություններ, կոնցերտներ, կվարտետներ, ջազային ստեղծագործություններ, երգեր, այդ թվում՝ ժամանակին սիրված «Քարավան» և «Կարինե» երգերը: Նա գրել է նաև կինոերաժշտություն:

Սովորե՛ք Արտեմի Այվազյանի «Աղջկա երգը», որը գրվել է «Ինչո՞ւ է աղմկում գետը» կինոնկարի համար: Ուշադրությո՛ւն դարձրեք տրիոլներին, որոնք պետք է երգել հավասար, երկու բախման ընթացքում:

ԱՂՋԿԱ ԵՐԳԸ

Խոսք՝ Լ. Սաղաթելյանի
Երաժշտ.՝ Ա. Այվազյանի



ԱՂՋԿԱ ԵՐԳԸ

Դու ինձ համար միշտ թանկ ես,
Իմ հարազատ զուլալ գետ,
Քեզ հետ է միշտ իմ կյանքը,
Ու երազները՝ քեզ հետ:

Կրկներգ — Հեյ, երգի՛ր, Արա՛քս,
Իմ բա՛խտ, իմ երա՛զ,
Ջա՛ն, Արա՛քս, դե երգի՛ր կարոտն իմ,
Դու իմ մտերի՛մ:

Դու իմ սիրո վկան ես,
Իմ սրտակից զուլա՛լ գետ,
Կանգնել եմ լուռ ինչքա՛ն ես
Քո ափերին ծաղկավետ:

Կրկներգ — Հեյ, երգի՛ր, Արա՛քս…

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՕՐԲԵԼՅԱՆ
(1928–2014)

Հայաստանում ջազային երաժշտության զարգացման գործում մեծ ավանդ ունի անվանի կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանը: Նա ծնվել է 1928 թ. Արմավիր քաղաքում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: Նրա ուսուցիչը եղել է կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանը:

Երկար տարիներ ղեկավարելով Հայաստանի պետական էստրադային նվագախումբը՝ նա ավելի է հարստացրել կատարվող երկացանկը: Նվագախումբը համերգներով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում՝ ցուցադրելով ջազային և էստրադային երաժշտության ասպարեզում հայկական երաժշտության նվաճումները:

Միաժամանակ Օրբելյանը գրել է իր մեծածավալ ստեղծագործությունները: Հայտնի են նրա

Լարային կվարտետը, Սիմֆոնիան, «Անմահություն» բալետը, մի շարք այլ սիմֆոնիկ ստեղծագործություններ, այդ թվում՝ «Զանգեզուր» պոեմը: Նա գրել է նաև բազմաթիվ ջազային ստեղծագործություններ և երգեր, երաժշտություն կինոնկարների համար, որոնց թվում հարկ է նշել «Ճանապարհ դեպի կրկես» ֆիլմը, որը նվիրված է հայ անվանի ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանին: Օրբելյանի «Պոլիֆոնիկ պրելյուդը» Պրահայի ջազային երաժշտության միջազգային փառատոնում արժանացել է մրցանակի (1966 թ.):

Իր ջազային ստեղծագործություններում Օրբելյանը կարողացել է գտնել ժողովրդականին հարազատ մեղեդու և ջազային միջոցների զուգակցման սեփական ճանապարհը:

Սովորեք Կ. Օրբելյանի ***«Արևիկ»*** երգը, ապա ունկնդրեք հատված ***«Պոլիֆոնիկ պրելյուդից»:***

Ունկնդրեք

Սովորեք

ԱՐԵՎԻԿ

Խոսք՝ Լ. Դուրյանի
Երաժշտ.՝ Կ. Օրբելյանի




2.
mp
1.Ա - ռե-վիկ է ա - նու - նը դ, իմ Ա - ռե-
2.Ծա ղիկ-նե - ր ը բաց - վել են,
լա՛, լա՛:
Դու լույ - սի՛ պես աղ - ջիկ, Քո ա - չե - ր ը գա-
վիկ, Քեզ նը - ման գե - ղե - ցիկ, Աղ - բյուր - նե - ր ը եր-
ռուն են, Դու իմ երգ, Ա-ռե - վի՛կ, Ա-ռա-վոտն է քո
գում են Քո ձայ-նով, Ա-ռե - վի՛կ, Ե-րազ - նե-ր ը ս շո-
կրկներգ
պու - նը, Բա - ր ի՛ լույս, Ա-ռե - վի՛կ: Ա-
ղում են Քո փայ-լով, Ա-ռե - վի՛կ:
չե-ր ը դ ան-վերջ կան - չում են, Ա - չե - ր ը դ ինձ ա - նուշ պան-
ջում են, Ա - նու - նը դ սի-ր ո զա - ր ուն է, Ա-
նու-նը դ քեզ նը-ման սի - ր ուն է: Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛,



Արևի՛կ է անունդ,
Դու լույսի՛ պես աղջիկ,
Քո աչերը գարուն են,
Դու իմ երգ, Արևի՛կ,
Առավոտն է քո տունը
Բարի՛ լույս, Արևի՛կ:

Կրկներգ — Աչերդ անվերջ կանչում են,
Աչերդ ինձ անուշ տանջում են,
Անունդ սիրո գարուն է,
Անունդ քեզ նման սիրուն է:
Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛,
Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛,
Անունդ սիրո գարուն է,
Անունդ քեզ նման սիրուն է:

Ծաղիկները բացվել են
Քեզ նման գեղեցիկ,
Աղբյուրները երգում են
Քո ձայնով, Արևի՛կ:
Երազներս շողում են
Քո փայլով, Արևի՛կ:

Կրկներգ — Աչերդ անվերջ …

ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Մարտին Վարդազարյանը ծնվել է 1938 թ. Երևանում: Ավարտել է կոնսերվատորիայի դաշնամուրի, ապա կոմպոզիտորական բաժինները, հիմնադրել և ղեկավարել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային նվագախումբը: Գրել է սիմֆոնիա, սիմֆոնիկ պոեմներ, կոնցերտներ, սոնատներ, մանրանվագներ, խմբերգեր և երգեր:

Մ. Վարդազարյանը նաև էստրադային երգերի, դրամատիկական ներկայացումների, կինոնկարների, մուլտիպլիկացիոն և փաստավավերագրական ֆիլմերի երաժշտության հեղինակ է: Իր անբասիր աշխատանքի համար Մ. Վարդազարյանին շնորհել են Երևանի պատվավոր քաղաքացու կոչում: 2011 թ. նա արժանացել է նաև թատերական ընկերության «Արտավազդ» մրցանակին:

Սովորեք Մ. Վարդազարյանի ***«Հեքիաթային ճանապարհ»*** երգը, ապա ունկնդրեք Մ. Վարդազարյանի ***«Սա Երևանն է»*** երգը:

Ունկնդրեք

Սովորեք

ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ

Խոսք՝ Ս. Մուրադյանի
Երաժշտ.՝ Մ. Վարդազարյանի





Երևանը մի առավոտ
Արթնացավ,
Աշխարհի մեծ քաղաքների
Շարքն անցավ,
Ուր ստորգետնյա գնացքներն են
Սլանում,
Հեքիաթային ճանապարհով
Մեզ տանում:

Սլանում են գնացքները,
Սլանում
Եվ դեպի նոր կայարաններ
Մեզ տանում.
Այս հրաշքը հավերժություն
Անվանենք,
Որ սերնդեսերունդ պահենք,
Պահպանենք:

Կրկներգ — Փառք կերտողին, փառք հանճարին մեր հայոց,
Որ քաղաքին գոտի կապեց ոսկեզօծ,
Մեր գեղեցիկ Երևանը դարավոր
Հասավ իր լույս երազանքին թևավոր:

ՌՈՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

20–րդ դարի երկրորդ կեսը նշանավորվեց հանրամատչելի, զվարճական երաժշտության տարբեր ուղղությունների առաջացմամբ: Թափ առավ ռոք երաժշտությունը՝ իր բազմաթիվ տեսակներով: Ռոք երաժշտությունը ծագել է բլյուզի և ռոքնռոլի միացության միջոցով:

Ռոք երաժիշտները հիմնականում իրենք են երգերի հեղինակները: Երաժշտությունը և կատարման ոճը ստեղծում են ռիթմական, դինամիկ այն լարվածությունը՝ «դրայվը», որը ստիպում է ունկնդիրներին անմիջապես արձագանքել պարելով, ձայնակցելով: Սովորաբար ռոք երաժիշտների խումբը բաղկացած է լինում չորս երգիչ–երաժիշտներից: Նրանց խմբի նվագարաններն են էլեկտրակիթառները և թմբուկները:

Առաջին ռոք խմբերն էին հռչակավոր *«Բիթլզը»*, *«Ռոլինգ սթոունզը»*, *«Փինք ֆլոյդը»*, *«ԱԲԲԱ»–ն* և այլն:

Առանձնապես նշանակալի է «Բիթլզ» քառյակի դերը ռոք երաժշտության զարգացման պատմության մեջ: Իրենց անմոռանալի երգերով, անկեղծ կատարմամբ նրանք սիրվեցին ամբողջ աշխարհում:

Ունկնդրեք երգեր ***«Բիթլզ»*** և ***«ԱԲԲԱ»*** խմբերի կատարմամբ:

Ունկնդրեք

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է ջազը մուտք գործել Հայաստան:
2. Ովքե՞ր են եղել Հայաստանի առաջին ջազային երաժիշտները:
3. Հայ կոմպոզիտորների ջազային ի՞նչ ստեղծագործություններ գիտեք:
4. Պատմե՛ք Ա. Այվազյանի և Կ. Օրբելյանի մասին:
5. Պատմե՛ք ռոք երաժշտության մասին: Ի՞նչ երաժշտություն եք սիրում լսել: Ինչո՞ւ:

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Հայ անվանի երգիչ, կոմպոզիտոր Վահան Արծրունին ծնվել է 1965 թ. դեկտեմբերի 5–ին Երևանում: Սերում է Արծրունիների իշխանական տոհմից: Լինելով հայտնի բժիշկ, գիտնական Վահան Արծրունու թոռը՝ դպրոցն ավարտելուց հետո նա որոշում է դառնալ բժիշկ:

1983–1989 թվականներին սովորում և ավարտում է Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանը, իսկ 1991 թ. ավարտում է նաև բժշկական օրդինատուրան և ստանում բժշկի որակավորում: Բժիշկ Վահան Արծրունին հոգու կանչով ուսումը շարունակում է նաև Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ սովորելով համաշխարային ճանաչում ունեցող երգչուհի, պրոֆեսոր Գոհար Գասպարյանի դասարանում, որն ավարտում է 1994 թ.:

Սկսվում է երգիչ և կոմպոզիտոր Վահան Արծրունու ստեղծագործական և համերգային գործունեությունը:

2000–2011 թվականներին կազմակերպում է «Արծրունի» պրոգրեսիվ երաժշտության առաջին ռոք խումբը Հայաստանում:

Կոմպոզիտոր Վահան Արծրունին ստեծագործում է տարբեր ոլորտներում՝ կամերային երաժշտությունից մինչև ռոք, էլեկտրոնայինից՝ սիմֆոնիկ և հոգևոր երաժշտություն: Կոմիտասի բանաստեղծությունների հիման վրա գրված Վահան Արծրունու երգերը՝ «Կոմիտաս. տասը հայտնություն» երգաշարը, ընդգրկված է նաև հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի ծրագրում և դասագրքում: Իսկ «Մաշտոց. սրբազան մարգարիտներ» մեսրոպյան շարականների՝ Վահան Արծրունու մշակումների շարքն ընդգրկվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հանրակրթական ուսումնական ծրագրում: Վահան Արծրունու ստեղծած Կոմիտասի և Մեսրոպ Մաշտոցի երգաշարերը ճանաչվել են լավագույնը Հայաստանում՝ Ազգային երաժշտական մրցանակաբաշխության մրցանակի «Լավագույն ալբոմ» անվանակարգում, ինչպես նաև ԱՄՆ–ում և Ֆրանսիայում: Վահան Արծրունին երաժշտություն է գրել նաև մուլտիպլիկացիոն ֆիլմերի, կինոնկարների և թատերական ներկայացումների համար: Նա արժանացել է նաև «Արտավազդ» մցանակին՝ գրող, դրամատուրգ Անուշ Ասլիբեկյանի «Մերսեդես» պիեսի երաժշտության համար:

Վահան Արծրունին Երևան քաղաքի մշակույթի պատվավոր գործիչ է:

Ունկնդրեք և երգեք ***«Անուշ գարուն»*** և ***«Աշուն–գիշեր»*** երգերը, խոսք՝ Կոմիտասի, երաժշտ.՝ Վ. Արծրունու:

Ունկնդրեք

Սովորեք

ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Խոսք՝ Կոմիտասի
Երաժշտ.՝ Վ. Արծրունու



ԱՇՈՒՆ–ԳԻՇԵՐ

Խոսք՝ Կոմիտասի
Երաժշտ.՝ Վ. Արծրունու



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆԵՐԳ

Երաժշտ.՝ Կոմիտասի



ԱՄՓՈՓՈՒՄ

Սիրելի՛ աշակերտներ, ավարտվեց ուսումնական տարին: Դուք ավելի խոր գիտելիքներ ձեռք բերեցիք երաժշտական արվեստի մասին: Ծանոթացաք երաժշտական նոր ստեղծագործությունների և հասկացությունների, ավելի ընդլայնվեց ձեր իմացությունը երաժշտության մասին:

Դուք իմացաք, որ ձեր շուրջը հնչող երաժշտությունը շատ բազմազան է, ունի բազմաթիվ ուղղություններ, տեսակներ, ժանրեր, որոնց պետք է ծանոթանաք, որպեսզի ճիշտ կողմնորոշվեք երաժշտություն ունկնդրելիս:

Համոզվեցիք, որ երաժշտական արվեստի բոլոր բնագավառները (ժողովրդական, աշուղական, հոգևոր երգարվեստ, դասական կոմպոզիտորական արվեստ, կենցաղային, զվարճական, հանրամատչելի երաժշտություն) կարևոր են ու արժեքավոր, դրանք անհրաժեշտ են մարդուն կյանքի տարբեր պահերին:

Դուք ծանոթացաք նաև 20–րդ դարի երաժշտական արվեստի ժանրերից մեկին՝ ջազին, իմացաք, որ այն ունի ոճական ճյուղավորումներ և ազգային դրսևորումներ, որոնք տարածվել են ամբողջ աշխարհում:

Համաշխարհային երաժշտական արվեստը հարուստ է հիանալի ստեղծագործություններով: Զարմանալի է, թե ինչպես է մարդկային հանճարը կարողացել ընդամենը յոթ հնչյունի միջոցով ստեղծել այդքան բազմազան, գեղեցիկ, խոր ու արտահայտիչ ստեղծագործություններ, որոնք անսպառ մտքեր ու հույզեր են ամփոփում իրենց մեջ, ինչպես նաև խթանում մարդկային մտքի զարգացումը:

Շարունակե՛ք բարեկամությունը երաժշտության հետ: Ձեզ դեռ սպասվում են բազմաթիվ անակնկալ հայտնագործություններ երաժշտության հրաշագեղ աշխարհում:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

1. Գերմանացի ականավոր կոմպոզիտոր, «Լուսնի սոնատի» հեղինակը:
2. Հայ ականավոր կոմպոզիտոր, «Սպարտակ» բալետի հեղինակը:
3. Ստեղնային–փողային խոշոր նվագարան:
4. Հայ կոմպոզիտոր, «Հերոսական բալլադի» հեղինակը:
5. Ամերիկյան կոմպոզիտոր, «Պորգի և Բես» օպերայի հեղինակը:
6. Հայ կոմպոզիտոր, «Դավիթ բեկ» օպերայի հեղինակը:
7. Ժողովրդական բազմալար կսմիթային նվագարան:
8. Հայ կոմպոզիտոր, հայկական ջազ–նվագախմբի հիմնադիրը:
9. Հայ կոմպոզիտոր, «Հայոց պատարագի» քառաձայն մշակման հեղինակ:
10. Ջազային նվագախմբում լայնորեն կիրառվող փողային նվագարան:
11. Արական ձայնի տեսակ:
12. Պղնձյա փողային նվագարան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 4

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 7
ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ..... 11
ՊԱՏԱՐԱԳ..... 14
ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏ..... 18
ԴԱՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 22
ԵՐԳՉԱԿԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ..... 34

ԹԵՄԱ 2. ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ..... 36

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 39
ԵՐԳԵՀՈՆ 40
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԼ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 42
ՋԱՋԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 48
ՌՈՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ 57

ԱՄՓՈՓՈՒՄ 61

ՅՈՒՐԻ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

7–րդ դասարան

Վերահրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր՝ Գոհար Քալաշյան
Համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Ժագ Թոփալագյանի
Համակարգչային նոտագրումը՝ Մարիամ Հարությունյանի

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

ՇԱՊԻԿԻՆ՝ Հայաստանի ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ

էջ 3՝ © Azd production, էջ 11, 27՝ «Զանգակ» հրատարակչության արխիվ, էջ 13, 44՝ Տ. Հեքեքյանի անձնական արխիվ, էջ 14, 15, 20, 24, 26, 30, 31, 35, 49, 51՝ Ս. Առաքելյանի անձնական արխիվ, էջ 19՝ Թ. Պողոսյանի անձնական արխիվ, էջ 22՝ © Barbara Krafft, էջ 23, 24, 25՝ Հ. Չեքիջյանի անձնական արխիվ, էջ 32՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի արխիվ, էջ 38՝ © Johann Strauss Sohn II, էջ 40՝ © Elias Gottlob Haussmann, էջ 45՝ © World-Telegram, էջ 45՝ © Mishkin, էջ 55՝ Յ. Յուզբաշյանի անձնական արխիվ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Տառատեսակը՝ «Ասպետ»: Պատվեր՝ 03/Հ–22
Տպաքանակը՝ 38 905

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak